

ԾՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Եթե ձեր աշխատավայրում, այցելուների, շահառուների մեջ կա անչափահաս, ով ենթադրաբար ենթարկվում է ընտանեկան բռնության կամ կասկած ունեք, որ ընտանիքում կա ընտանեկան բռնություն, ապա կարևոր է ծնողի հետ հանդիպումը (կարևոր է ընդգծել, որ հանդիպումը պետք է կազմակերպել բռնություն չգործադրող կամ ենթադրաբար բռնության ենթարկվող ծնողի հետ): Մինչև հանդիպում կազմակերպելը, եթե որոշել եք խոսել ծնողի հետ, ապա.



Գտեք անվտանգ տեղ և ժամանակ խոսելու ծնողի հետ՝ փորձեք կանչել ծնողին այն ժամին, երբ հավանաբար նրա բռնություն գործադրող զուգընկերը տանը չի, հարցրեք արդյոք հարմար է իրեն գալ հանդիպման:



Կիսվեք ծնողի հետ ձեր մտահոգություններով երեխայի վարքի վերաբերյալ:



Աջակից եղեք և իրազեկեք ծնողին հնարավոր ռեսուրսների մասին, ինչ կազմակերպություններ կան, ինչ ծառայություններ կան, որ կարող են աջակցել ընտանեկան բռնության ենթարկվող անձին:



Ծնողի հետ խոսելիս կարևորեք ծնողավարման մի շարք կարևոր կետեր, որոնք կարող են տուժել ընտանեկան բռնության արդյունքում, մասնավորապես ծնող-երեխա հարաբերությունների, հուզական կապի խնդիրներ:



Հնարավոր է ծնողը ձեր մտահոգություններին արձագանքի ազդեցիկ և զայրացած, կամ հերքի ենթադրյալ բռնության առկայությունն իրենց տանը, բայց ամեն դեպքում կարևոր է, որպեսզի երեխայի տեսանկյունից բացատրեք իրավիճակը և հետևանքները, ինչպես նաև խոսեք ընտանեկան բռնության ազդեցության մասին:



Եթե ծնողը համաձայնի, աջակցեք նրան, որպեսզի վերջինս դիմի համապատասխան կազմակերպություն՝ մասնագիտական աջակցություն ստանալու, ինչպես նաև անվտանգության պլանի մշակման համար:



Վստահեցրեք բռնության ենթարկվող անձին, որ ինֆորմացիան չէք կիսի բռնություն կիրառողի հետ:



Հարցրեք ծնողին, արդյոք դուք կարող եք որոշակի միջոցառումներ կազմակերպել և դիմել սոցիալական աջակցության համապատասխան կենտրոններ: